

«ՑՈՒՑԱԿ ԶԵՌԱԳՐԱՑ»

Հայ բանասիրության մեջ հսկայական է եղել ձեռագրացուցակների դերը: Այս դեպքում «ցուցակ» բառը չպետք է բառացի հասկացվի, քանի որ հայ հին գրչագրերի ցուցակները մեծ մասամբ մատենագիտական-բանասիրական բնույթի ուսումնասիրությունների արժեք ունեն և հետո են ձեռագրերի սոսկական թվարկում լինելուց: Պատահական չէ, որ հայոց ձեռագրացուցակներ կազմելու աշխատանքներ կատարել են մի շարք անվանի հայագետներ (Հ. Տաշյան, Գ. Հովսեփյան, Ն. Մառ, Հ. Աճառյան, Ֆ. Մակլեր, Ֆ. Կոնիբեր, Հ. Մանանդյան, Ն. Ակիմյան և շատ ուրիշներ):

Աշխարհի տարբեր ծայրերում սփռված հայ հին գրչագրերի մեծ ու փոքր գրեթե բոլոր հավաքածուները այսօր ունեն իրենց ձեռագրացուցակները: Եվ, որքան էլ այդ զարմանալի թվա, բացառություն է կազմում միայն հայ հին ձեռագրերի՝ աշխարհում ամենամեծ հավաքածուն ունեցող Մաշտոցի անվան Մատենադարանը:

Մատենադարանի ձեռագրերի հավաքածուն, ինչպես այտնի է, գոյացել է տարբեր վայրերի մի շարք հավաքածուների, ինչպես և առանձին մարդկանցից ձեռք բերված գրչագրերի գումարից: Հիմքն, իհարկե, կազմել է էջմիածնի մատենադարանի հին հավաքածուն:

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերը բաղադրող առանձին հավաքածուների զգալի մասն ունի իր ձեռագրացուցակները, ինչպես, ասենք, Ն. Հալայանցի («Ջալախք» աշխատության մեջ, Քիֆլիս, 1897, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», Քիֆլիս, 1915 և այլն), Ն. Մառի («Ցուցակ համառօտ ձեռագրաց վանուց Սևանայ», Մոսկվա, 1892), Մ. Բարխուդարյանցի («Արցախ» գրքում, Բաքու, 1895), Հ. Աճառյանի («Ցուցակ հայերէն ձեռագրաց Գանասարեան վարժարանի...», Վիեննա, 1900, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Քարիզի», Վիեննա, 1910) և այլոց կազմածները:

Ամենակարևորն, իհարկե, Դ. Շահնազարյանի կազմած «Մայր ցուցակ»-ն է, որ հրատարակվեց 1863 թվականին Հ. Կարենյանցի կողմից (Քիֆլիս): Սա էջմիածնի մատենադարանի երկրորդ ձեռագրացուցակն է (առաջինը՝ Հ. Շահնաթունյանցի կազմած և Մ. Բրոսսեի հրատարակածն է՝ 1840-ին):

Ահա 1863 թվականից հետո այլևս էջմիածնի մատենադարանի որևէ կարգի ամբողջական ձեռագրացուցակ չի հրատարակվել՝ ավելի քան 100 տարի, այսինքն՝ մինչև 1965 թվականը, երբ լույս տեսավ Մաշտոցի անվան Մատենադարանի «Ցուցակ ձեռագրաց»-ի առաջին հատորը:

Այս ձեռագրացուցակը պետք է բաղկացած լինի երկու հատորից: Հրատարակված առաջին հատորը, որի կազմման աշխատանքները տևել են շուրջ հինգ տարի, ընդգրկում է Մատենադարանում պահվող ավելի քան 10280 ձեռագրերից 5000-ը: Երկրորդ հատորում պետք է ներկայացվեն մնացած ձեռագրերը և քայքայված կամ կորած հին գրչագրերի 1683 պահպանված պատճիկները:

Առաջին հատորը սկսվում է Օ. Եզանյանի շատ հետաքրքրական և խնամքով կազմված ներածականով, որ կոչվում է «Մատենադարանի ձեռագրական հավաքածուները»: Այստեղ տրվում է Մատենադարանի պատմությունը սկսած 5-րդ դարից: Զեղինակը համոզված սգտագործել է գրավոր տարբեր աղբյուրների մեջ Մատենադարանի մասին եղած մեծ ու փոքր բազմաթիվ տեղեկություններ: Մանրամասն նկարագրված են հայ հին ձեռագրերի այն հավաքածուները, որոնցից բաղադրվել է Մատենադարանի ներկայիս մեծ հավաքածուն: Խոսվում է տարբեր ժամանակներում էջմիածնում իրրև մատենապետ աշխատած անձանց, նրանց կատարած աշխատանքի մասին և այլն: Մի խոսքով, Օ. Եզանյանի աշխատությունը մի ուշագրավ ավանդ է ինչպես Մաշ-

1 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի: Կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան: Ներածությունը Օ. Եզանյանի: Խմբ.՝ Լ. Խաչիկյանի և Ա. Մնացականյանի: Հատոր Ա, Երևան, 1965, 1635 սյունակ:

տոցի անվան Մատենադարանի, այնպես էլ Հայաստանում պրադարանային գործի պատմության ուսումնասիրման մարզում:

Ս. Եզանյանի ներածականը, որ ինքնուրույն և լուրջ բանասիրական ուսումնասիրություն է, հեղինակի երկարատև և փութաջան աշխատանքի արդյունք է:

Զեռագրացուցակում 5000 ձեռագրերից յուրաքանչյուրի նկարագրությանը նվիրված է երկու-երեք տողից մինչև մեկ սյունակ: Մի էջի վրա միջին հաշվով նկարագրված են յոթ ձեռագրեր:

Յուրաքանչյուր ձեռագրի նկարագրությունը բաղկացած է հետևյալ տարրերից. ա) համար, որ տվյալ գրչագրի հերթական գույքահամարն է ձեռագրատանը, բ) խորագիր, որ բաղկացած է բնագրի հեղինակի և նրա երկի անունից և կամ ձեռագրի մտացածին (կազմողների կողմից պրված) կամ փաստական վերնագրից, գ) տվյալներ ձեռագրի ստեղծման, շափերի, նյութի, սառատեսակների մասին, ուր նշված են՝ գրչագրի ստեղծման թվականը, վայրը, գրիչը (ընդօրինակողը), ծաղկողը, կազմարարը, ստացողը, պատվիրողը, թերթերի քանակը, ինչի վրա է գրված (թուղթ, մագաղաթ), մեծությունը, օգտագործված գրի տեսակը, տեղեկություն մանրանկարների մասին և այլն, դ) բովանդակությունը, ուր թվարկվում են ձեռագրում եղած նյութերը:

Զեռագրացուցակն ունի հետևյալ ոժանդակ ցանկերը՝ Ժամանակագրական, Նախագաղափար և հետագա հիշատակաբանների, Նյութերի, Պատառիկ պահպանակների, Տեղանունների, Անձնանունների:

Երկրորդ հատորը պետք է ունենա այս նույն ցանկերը երկու հատորի համար, գումարած ձեռագրերի նախկին և ներկայիս համարների համեմատական տախտակը, ինչպես և մի երկու նոր օժանդակ ցանկ, այդ թվում գուցե և՛ թեմատիկ:

Անկասկած է, որ այս ձեռագրացուցակի հրատարակումով թե՛ Երևանում և թե՛ աշխարհի տարբեր մասերում աշխատող հայագետ-բանասերների ձեռքը մի շատ կարևոր տեղեկատու է տրվում Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր հրատարակությունների վերաբերյալ:

Այս ձեռագրացուցակով, վերջապես, հրապարակ է հանվում հայ ձեռագրերի աշխարհում ամենահարուստ հավաքածուի ամբողջական ցանկը: Հենց միայն այսքանը բավական է հրատարակված ձեռագրացուցակի մեծ արժեքն ու կարևորությունը հասկանալու համար:

Ցուցակում տրվում են յուրաքանչյուր ձեռագրի վերաբերյալ ամենակարևոր տեղեկությունները, թեև շատ հակիրճ:

Այսուհետև Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից օգտվող յուրաքանչյուր անձ չի կարող չդիմել այս «Ցուցակ ձեռագրաց»-ին: Ծիշտ է օգտվողների բոլոր հարցերին չէ, որ կպատասխանի ձեռագրացուցակը, բայց շատ հարցերի այն կպատասխանի և մանավանդ՝ ամեն ղեպքում նախնական ուղղություն կտա հետագա պրպտումների համար:

Անվանացանկը օգտվողին մի շարք ղեպքերում կօգնի իմանալու, թե իրեն հետաքրքրող հեղինակի երկերը ո՞ր ձեռագրերի մեջ կան և այս կամ այն գործչի, հեղինակի կամ արվեստագետի մասին նյութեր ո՞ր ձեռագրերի մեջ կարելի է գտնել:

Իազմաթիվ ղեպքերում ուսումնասիրողին հայ ձեռագրերի ստեղծման կենտրոնների և ժամանակագրության վերաբերյալ կարևոր տեղեկություններ կտան Ժամանակագրական և Տեղանունների ցանկերը:

Սյապիսով, այն պայմաններում, երբ Մաշտոցի անվան Մատենադարանը տասնյակ տարիներ շունչ էր ձեռագիր գանձերը ներկայացնող սրել տպագիր ուղեցույց, «Ցուցակ ձեռագրաց»-ի երևան գալը շատ ուրախալի երևույթ է և, ըստ ամենայնի, ողջունելի:

Միաժամանակ չպետք է մոռանալ, որ այս «Ցուցակ ձեռագրաց»-ը հայ դասական ձեռագրացուցակների բնույթի չէ և հեռու է, ասենք, Հ. Տաշյանի հայտնի ձեռագրացուցակի գիտական-բանասիրական մակարդակից:

Կազմողները նպատակ էլ չեն ունեցել դասական բնույթի ձեռագրացուցակ ստեղծելու նրանց աշխատության ծավալը նախապես եղրափակված է եղել որոշակի սահմաններով: Ավելի քան 10.000 ձեռագրերի համար ստեղծվող ցուցակի ծավալային նեղ սահմանները կարող էին հնարավորություն տալ կատարելու սոսկ գրչագրերի թվարկում, վերը հիշված ամենաառաջնահերթ տեղեկությունների նշմամբ: Հասկանալի է, որ ձեռագրացուցակում չկան որևէ շափի քաղվածքներ բնագրերից, ինչպես և բնագրերի բովանդակությանը կամ հեղինակներին վերաբերող գիտական ծանոթագրություններ:

Սա պակաս է, բայց այնպիսին, որ լիսում է ցուցակի նախապես ծրագրված ծավալից, նրա հակիրճ բնույթից: Պետք է ասել, որ ընդհանրապես «Ցուցակ ձեռագրաց»-ի որոշ անհարմարու-

Քյունեներն ու թերութիւնները ձեռագրացուցակի ոչ մեծ ծավալով և հակիրճ բնութիւնով են պայմանաւորուած: Նշենք դրանցից մի քանիորը:

«Ցուցակ ձեռագրաց»-ից օգտվելիս անմիջապէս նկատուած ենք, որ մի շարք ձեռագրերում եղած առանձին բնագրերը նրանց բնորոշող կարևորագույն հատկանիշներով չէ, որ նշվում են: Շատ դեպքերում, իհարկե, ձեռագրի պարունակած նյութերը նշվում են բավարար կերպով՝ հեղինակ, վերնագիր և այլն: Վերցնենք, օրինակ, 55 համարի Ժողովածու-ի բովանդակութիւնը՝ «Լուծմունք վեցօրէից Բարսղի: Դաւթի և Յակոբայ Լուծմունք Դիոնիսիոսի: Լուծմունք Յաղագս բնութեան մարդոյն Նեմեսիոսի» և այլն: Ինչպէս տեսնուած ենք, յուրաքանչյուր բնագիրն առանձին նշված է ժողովածուի մեջ եղած վերնագրով ու հեղինակի անունով:

Բայց ահա բազմաթիւ դեպքերում էլ տարբեր նյութեր պարունակող ձեռագրերի բովանդակութիւնը անբավարար է բացահայտուած: Այսպէս, օրինակ, Ճառերնուտի մեջ սովորաբար լինում են մի շարք հեղինակների ճառեր, խրատներ, ներբողներ, սակայն բովանդակութեան մեջ թվարկվում են միայն հեղինակները, չեն նշվում առանձին ճառերի, խրատների կամ ներբողների անունները: Վերցնենք, օրինակ, 4756 համարի Ճառերնուտ-ը. բովանդակութեան մեջ կարդում ենք.

«Բվնդ. Ճառք, Խրատք (Մովս. Երզնկացի, Յովհ. Երզնկացի, Ոսկեբերան, Թէոփիլոս, Գէորգ վրդ., Եղիշէ, Սարգիս Շնորհալի, Գրիգոր վրդ., Բարսեղ, Վարդան վրդ., Յովհ. Գառնեցի, Եփրեմ, Յակ. Սրճեցի, Ան. Նարեկացի, Եսեբիոս Կեսարացի, անանունք): Ներբողեանք (Եփրեմ, Ոսկեբերան, Յակ. Սրճեցի)»: Այստեղ ձառն և Խրատք վերնագրերի դիմաց նշված են 15 հեղինակներ և անորոշ քանակով անուններ, բայց չեն բերված այդ ճառերի և խրատների անունները: Նշված հեղինակներից ոմանք մի շարք տարբեր բովանդակութեան ճառեր ունեն, և ձեռագրի բերված բովանդակութեանից հնարավոր չէ իմանալ, թե որ ճառի կամ ճառերի և կամ խրատների մասին է խոսքը:

Նույն բանը տեսնուած ենք մի շարք Ժողովածուների բովանդակութիւններում: Օրինակ, 3239 համարի Ժողովածու-ի բովանդակութեան մեջ կա «Ճառք, Քարոզք, Խրատք (Բարսեղ, Եփրեմ, Ոսկեբերան, Յովհ. Մանդակունի, Վարդ. Այգեկցի, Եղիշէ վրդ., Թէոփիլոս, Գրիգոր, Յովհ. Երզնկացի, անանունք)»: Դարձյալ նույն անորոշութիւնը:

Այստեղ պետք է նկատի ունենալ նաև այն, որ ձառն, Քարոզք, Խրատք, ըստ էութեան, իրական վերնագրեր չեն. այդ անունների տակ հին և միջնադարյան գրականութեան մեջ ամենատարբեր բնութի բնագրեր կան, ուստի և նրանք (այդ անունները) հաճախ գրեթե ոչինչ չեն ասում ժողովածուներում եղած նյութերի բովանդակութեան կամ բնութի մասին, չեն տարբերակում այդ նյութերը:

Նույնիսկ հակիրճ ձեռագրացուցակի մեջ էլ հարկ էր հեղինակների առանձին երկերը (ճառեր, քարոզներ և այլն) որևէ կերպ տարբերակել: Իսկ ընդարձակ ձեռագրացուցակում շատ դեպքերում հարկ կլինէր տալ բնագրերի սկզբնատողերը, քանի որ միևնույն բնագիրը, ինչպէս հայտնի է, հաճախ տարբերակներ էլ է ունենում, երբեմն իրարից շատ հեռացած:

Նկարագրութիւններում տրվող ձեռագրերի բովանդակութեան մեջ չեն նշվում նաև էջերը: Ստացվում է այնպէս, որ օգտվողը որևէ ժողովածուի կամ ճառերնուտի բովանդակութեանից հաճախ իմանում է միայն մի բան, որ այնտեղ տվյալ հեղինակից (կամ հեղինակներից) ինչ-որ բնագիր կա, անհայտ է մնում, թե դա ինչ բնագիր է և ձեռագրի (հաճախ շատ մեծածավալ) որ էջից է սկսվում այն:

Այնուհետև, ձեռագրացուցակի նյութերի և անձնանունների ցանկերում նույնպէս մեծ մասամբ չկան բնագրերի իրական, տարբերակող անունները: Օրինակ, վերը բերված «Լուծմունք վեցօրէից Բարսղի» կամ «Լուծմունք Յաղագս բնութեան մարդոյն Նեմեսիոսի» բնագրերը, որ նշված են 55 համարի ձեռագրի բովանդակութեան մեջ, օժանդակ ցանկերում տեղ չեն գտել: Նրանք նյութերի ցանկում իբրև 55 թիւ անհուսալիորեն թաղված են «Մեկնողականք. Մեկնութիւնք, Լուծմունք սուրբ և ծիսական գրեանց» ընդհանուր վերնագրի տակ եղած շուրջ 1100 ձեռագրերի համարների մեջ:

Նյութերի ցանկում մեծ մասամբ ոչ թե ձեռագրերի նյութերն են բացահայտուած, այլ հավաքուած են գրչագիր մատյանների և բնագրերի ունեցած կամ կազմողների կողմից ստեղծված ընդհանուր բնութի անունները և այդ անունների տակ նշված են այն ձեռագրերի համարները, որոնք այդ անուններով են նկարագրված կամ որոնց բովանդակութեան մեջ կան այդպիսի անուններ:

Որոշ դեպքերում այդ կարգի անվանաբանները, իհարկե, պատկերացում տալիս են համապատասխան բնագրերի մասին: Օրինակ, այնպիսի կանոնական բնագրերի անուններ, ինչպէս Աստուածալուծիչ, Անտարան, Աղվոսարան, Շարակնոց և այլն պատկերացում տալիս են

նյութի մասին (իեն այս դեպքերում էլ երբեմն լինում են քննադրային մի շարք առանձնահատկություններ, որոնք չեն նշված): Սակայն ավելի շատ դեպքերում՝ նյութերի ցանկում թվարկված անվանարատերը գրեթե ոչինչ որոշակի չեն ասում օգտվողին: Արդեն ասվեց «Մեկնողականք»-ի մասին: Կան նաև շատ ուրիշ նման վերնագրեր: Օրինակ, «Չափաբերականք»-ի տակ նավարկած են շուրջ 700 համարներ, որոնք ներկայացնում են միջնադարյան տաղերը, բանաստեղծությունները: Սակայն իրականում օգտվողի համար դա սոսկ թվերի անկենդան շարան է: Ո՞ր ուսումնասիրողը պետք է 700 համարների տակ եղած նկարագրությունները մեկ-մեկ նայի՝ իմանալու համար, թե իրեն հետաքրքրող որ տաղը որտեղ է գտնվում: Կամ «Քարոզք» բառի տակ թվարկված են շուրջ 800 ձեռագրերի համարներ, այսինքն՝ նշված են այդ ձեռագրերում եղած շուրջ 800 ամենատարբեր բովանդակության բնագրեր, որոնք կարող են նամարվել քարոզ կամ որոնց վերնագրում կա էություն բառը: Հասկանալի է, որ համարների այսպիսի թվարկումը գործնական օգուտ տալ ընթերցողին չի կարող: Համարների նույնպիսի կուտակումներ կան նաև այլ վերնագրերի տակ՝ Չափաբերականք, Նստեք, Փիլիսոփայականք, Պատմագրականք, Թողովածուք, Խրատականք և այլն: Արդյոք ավելորդ աշխատանք չի՞ թափվել այս կարգի անվանարատերի տակ հարյուրավոր համարներ հավաքելու համար: Ծիշտ է՝ համարների այդ թվարկումները կարող են ունենալ վիճակագրական որոշ արժեք, բայց եթե այդ մեծ աշխատանքը կազմողները գործադրեին զոնե հակիրճ ձեռագրացուցակի ընձեռած հնարավորությունների սահմաններում մի շարք բնագրեր ինչ-որ շափով ավելի տարբերակելու համար, շատ ավելի մեծ բան արած կլինեին:

Անձնանունների ցանկը անշուշտ ավելի օգտակար է և ընթերցողի բազմաթիվ հարցումներին պատասխանում է: Բայց սա էլ թերություններ ունի: Ձեռագրացուցակում բանասիրական-քննական որոշակի աշխատանք կատարվել է. օրինակ, ճշտվել են որոշ բնագրերի հեղինակներ, սակայն կազմողները չեն խորացել մի շարք կարևոր բանասիրական բնույթի հարցերի մեջ, ինչպես օրինակ՝ թե տվյալ հեղինակի ու նրա գործի մասին ինչ կարծիքներ կան, արդյոք այս կամ այն հեղինակի անունով հայտնի բոլոր գործերն են նրանը, թե՞ ոչ և այլն: Ձեռագրում եղածը հակիրճորեն նշել, — ահա հիմնականում սա է եղել կազմողների մտեցումը: Այդ բանը արտացոլվել է նաև օժանդակ ցանկերում: Օրինակ, Մովսես Խորենացու անունով հայտնի «Աշխարհացոյց»-ը շատերը համարում են Անանիա Շիրակացունը, ուրիշները անհայտ հեղինակի, երրորդները՝ գտնում են, որ այդ գործը նախապես կազմել է Խորենացին, ապա հիմնովին վերակազմել Շիրակացին: Այս ամենի մասին որևէ խոսք չկա ձեռագրացուցակում, ի՞նչ ձեռագրում «Աշխարհացոյց»-ը Խորենացու անունով է ընդօրինակված, կազմողները այն Խորենացուն էլ համարել են, առանց որևէ ծանոթության անգամ: Նույն բանը տեղ է գտել անձնանունների ցանկում՝ «Աշխարհացոյց»-ը դրված է Մովսես Խորենացու անվան տակ, իսկ Անանիա Շիրակացու անվան տակ որևէ հղում կամ ծանոթություն չկա այն մասին, որ այդ երկը որոշ բանասերների կարծիքով Շիրակացունն է:

Կամ՝ Մեսրոպ Մաշտոցի անունով հայտնի են ապաշխարության շարականները, իսկ Գրիգոր Լուսավորչի անունով հայտնի «Յաճախապատում»-ը (կամ նրա մի մասը) որոշ բանասերներ վերագրում են Մաշտոցին: Այս իրողությունների մասին էլ որևէ ծանոթություն չկա ձեռագրացուցակում կամ ցանկերում: Ըստ որում, Մեսրոպ Մաշտոցը որպես նրա անունով հայտնի երկերի (օրինակ շարականների) հեղինակ բնավ հանդես չի գալիս ձեռագրացուցակում:

Եվ այսպես, բոլոր մյուս բնագրերի վիճելի հեղինակների շատ հարցեր չեն արժարժվում ձեռագրացուցակում կամ օժանդակ ցանկերում: Սա, իհարկե, լուրջ թերություն չի կարելի համարել (իսկ որոշ բանասերներ բնավ էլ պարտադիր չեն համարում ձեռագրացուցակի հետադոտական նման բնույթը): Անձնանունների ցանկը ունի ուրիշ լուրջ թերություն: Դա այն է, որ այստեղ ևս չկա կամ շատ թույլ է առանձին բնագրերի տարբերակումը: Օրինակ, Ներսես Շնորհալու անվան տակ յրված են 360-ից ավելի համարներ. ընթերցողը չի կարող իմանալ թե դրանցից որն է «Յիսուս որդին», որը «Ողբ Եղեսիոյ»-ն, որը՝ հանելուկները և այլն: Նույն կարգի համար թվեր են դրված Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Նարեկացու, Առաքել Սյունեցու և մյուս նշանավոր անունների տակ: Հեղինակների առանձին երկերը այստեղ էլ չեն տարբերակվում: Վարդան Այգեկցու անվան դիմաց շարված շուրջ 180 թվերի լեզուն հասկանալու համար, անհրաժեշտ է՝ գտնել ու նայել շուրջ 180 նկարագրություններ և դրանից հետո էլ հնարավոր է, որ ընթերցողը չպարզի իրեն հետաքրքրող հարցը: Այս անգամ էլ նա պետք է նշված համարների համաձայն դիմի բազմաթիվ ձեռագրեր թերթելու աշխատանքին:

Մի խոսքով, ձեռագրացուցակը շատ դեպքերում չի պարունակում ուսումնասիրողներին անհրաժեշտ մի շարք տեղեկատվություններ: Այդ մասին ասված է նաև ռեդկու խոսքում... ցուցակը, իհարկե, ի վիճակի չէ սպառիչ պատասխան տալու մատենագիտական բոլոր հարցում-

ներին, սակայն անտարակույս այն կոյուրացնի հայազետների աշխատանքը, մանավանդ վերը թվարկված ուղեցույցների և քարտարանների, ինչպես նաև տպագրվող ձեռագրաց հիշատակարանների, «Հայկական մատենագիտություն» ծավալուն աշխատության և այլ աղբյուրների օգտագործմամբ»:

Մենք երկու խոսքով անդրադարձանք «Ցուցակ ձեռագրաց»-ի այն թերիներին, որոնք հիմնականում բխում են նրա հակիրճ բնույթից: Սակայն կան և ուրիշ կարգի թերություններ՝ վրիպակներ, բացեր և այլն, որոնց մի մասը կազմողները ուղղել են զրքի վերջում (սերացումներ և ուղղումներ) բաժնում):

«Ցուցակ ձեռագրաց»-ում տեղ են գտել նաև մատենագիտական ու լեզվական որոշ անճշտություններ, որոնցից հեշտությամբ կարելի էր խուսափել (և այժմ կարելի է խուսափել երկրորդ հատորում): Օրինակ, նկարագրությունների խորագրերում երկի հեղինակը և վերնագիրը շարված են միևնույն գլխագիր տառերով, որ մատենագիտական նկարագրության տեսակետից ճիշտ չէ. հեղինակը վերնագրից պետք է տարբերվի որևէ կերպ (ընդգծումով, իսկ տպագիր երկում տառատեսակների տարբերությամբ): Նույնը կրկնված է գրչագիր մատյանների բովանդակությունների մեջ՝ հեղինակն ու վերնագիրը այստեղ ևս որևէ ձևով չեն տարբերակված:

Կան նաև, ինչպես ասում են, «սեխնիկական բնույթի» անճշտություններ: Օրինակ, օժանդակ ցանկերում նշված անունները և համարները, երբեմն անհրաժեշտ տեղը չեն հղում ընթերցողին: Այսպես, 1549 սյունակում (անձնանունների ցանկ) Մովսէս անվան տակ գտնում ենք «-սրկ., 1628 թ., ծաղկման օժանդակող ի Բաղէշ — 198»: Սակայն 198 համարի տակ եղած նկարագրության մեջ Մովսէս անուն չկա: Անձնանունների ցանկում նույն Մովսէս-ի տակ կան նաև 4263, 835, 4457, 326, 3055, 4322 համարները, սակայն այդ համարներն ունեցող ձեռագրերից ոչ մեկի նկարագրության մեջ որևէ Մովսէս չկա, այլ կա Մուրադ: Կամ՝ տեղանունների ցանկում Վենետիկ-ի դիմաց գրված համարների մեջ կա 4338: Բաց ենք անում ձեռագրացուցակը տեսնելու համար, թե այդ ինչ ձեռագիր է գրված Վենետիկում, բայց այդ համարի տակ նկարագրված է էջմիածնում 1864 թվականին գրված մի այլ ձեռագիր: Այս կարգի անճշտությունները քիչ չեն ցանկերում, սակայն նրանք, թերևս, բնականոն են ամեն մի մատենագիտության օժանդակ ցանկի համար, ուստի ավելի կանգ չունել նրանց վրա հարկ չկա:

«Երկու խոսքում» Մատենագրարանի ղեկավարությունը խոստանում է մոտ ապագայում հրատարակության պատրաստել առանձին մասնագիտական (թեմատիկ) ցուցակներ, որոնք կրացահայտեն ձեռագրերի բովանդակած նյութերը ըստ բնագավառների (պատմագրություն, փիլիսոփայություն, աստղաբաշխություն և այլն): Սա անշուշտ շատ լուրջ լրացում կլինի «Ցուցակ ձեռագրաց»-ին և մեծապես կօգնի նրանից օգտվողներին: Սակայն, այնուամենայնիվ, հարց է առաջանում՝ այդ ամենով վերջնականապես լուծվում է արդյոք Մաշտոցի անվան Մատենագրարանի ձեռագրացուցակի հարցը:

Շատերը գտնում են որ՝ ոչ, որ այդ բնագավառային ցանկերով անդամ հարցը լիովին չի լուծվում և որ պետք է օրակարգի մեջ մնա բազմահատոր, հանգամանալից, ձեռագրացուցակի կազմելու խնդիրը, ձեռագրացուցակ, որ իր կազմման սկզբունքներով պետք է նման լինի Հ. Տաշյանի և Հ. Ոսկյանի կազմածներին:

Հազիվ թե գտնվի մեկը, որ սկզբունքորեն առարկի այս կարծիքին: Սակայն հարց է առաջանում, ի՞նչ ձևով և երբ պետք է ծրագրել ու կազմակերպել այդ մեծ ձեռագրացուցակի ստեղծման աշխատանքը: Չպետք է մոռանալ, որ դա ստեղծագործական-բանասիրական բնույթի աշխատանք է, որի կատարման համար անհրաժեշտ են մարդկանց ոչ միայն հատուկ կարողություններ, այլև ցանկություն այդ գործը կատարելու և՛, մանավանդ, գործի նկատմամբ սեր ու ոգևորություն, ինչպես նաև երկար ժամանակ աշխատելու համբերություն:

Այս մասին, անշուշտ, պետք է մտածի Մատենագրարանի գիտական խորհուրդը:

Իսկ առայժմ, «Ցուցակ ձեռագրաց», նրա երկրորդ հատորի լույս ընծայումից հետո միանգամայն լուրջ նպաստ կլինի Մատենագրարանի ձեռագիր մատյանների պարունակած հարստությունները լիարժեք կերպով բացահայտելու ճանապարհին: Շատ կարևոր ու շնորհակալ գործ է կատարել Մաշտոցի անվան Մատենագրարանը այդ աշխատության հրատարակմանը ձեռնարկելով: